

Աշխատանքի կատարմանն աջակցել է Բրիտանական

Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) (www.bewc.org)

ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական բարեփոխումների հարցում

ԱԼԼԵՆԵ ԴԵ ՌԻԲԵՄՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔ

ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի
ՎՃՈՒ

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
<<http://www.legalguide.am>>

«Ալլենե դե Ռիբեմոնն ընդդեմ Ֆրանսիայի գործի համառոտ շարադրանքը» կազմվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության անդամ, փաստաբան Նարինե Գասպարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար:

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

**ԱԼԼԵՆԵ ՂԵ ՌԻՔԵՄՈՆՆ ԸՆԴԴԵՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի ՎՃԻՈԸ

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԵՐԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

A. Գործի փաստերի նկարագրությունը

Դիմումատուն, պարոն Ալլենե Ղե Ռիքեմոնը ընկերության քարտուղար էր և ապրում էր Լամոնտժուայում (Lamontjoie) [Լոտ-է-Գյաղոն Lot-et-Garonne]:

1976 թվականի դեկտեմբերի 24-ին Պառլամենտի անդամ (Օուլի մարզ департамент of Eure) և նախկին նախարար պարոն Ժան Ղե Բրոզլին սպանվել էր դիմումատուի տան առջև: Նա այցելության էր եկել իր ֆինանսական հարցերով խորհրդատուին, որն ապրում էր նույն շենքում, և ում հետ պարոն Ալլենե Ղե Ռիքեմոնը պատրաստվում էր Փարիզի ռեստորաններից մեկի՝ «Սագաթաթիկների թագուհու ճաշարանի» (La Rôtisserie de la Reine Pédauque) համասեփականատերը դառնալ: Այդ նախագիծը ֆինանսավորվել էր սպանվածի վերցրած վարկի միջոցներով: Նա պարտք վերցրած գումարը փոխանցել էր դիմումատուին, ով էլ պատասխանատու էր վարկը մարելու համար:

Դիտավորյալ սպանության առիթով դատական քննություն սկսվեց: 1976 թվականի դեկտեմբերի 27-ին և 28-ին Փարիզի ոստիկանության քրեական բաժնի աշխատակիցները ձերբակալեցին մի շարք անձանց, ներառյալ սպանվածի ֆինանսական հարցերով խորհրդատուին: Պարոն Ալլենե Ղե Ռիքեմոնը ձերբակալվեց դեկտեմբերի 29-ին:

B. 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսը

1976 թվականի դեկտեմբերի 29-ին ֆրանսիական ոստիկանության հաջորդ տարվա բյուջեին նվիրված մամուլի ասուլիսի ժամանակ Ներքին գործերի նախարար պարոն Միշել Պոնյատովսկին, Փարիզի քրեական հետաքննության վարչության պետ պարոն Ժան Դյուկրեն և քրեական բաժնի պետ սուպերինտենդանտ Պիեռ Օտտավիոլին անդրադարձան ընթացքի մեջ գտնվող հետաքննությանը:

Ֆրանսիական երկու հեռուստատեսային ալիքներ իրենց լուրերի թողարկումներում լուսաբանեցին այս մամլո ասուլիսը.

«TF1 ԼՈՒՐԵՐ

Հաղորդավար պարոն Ռոջեր Ժիգուել... ահա թե ինչպես են հասարակությանը ներկայացվել Ղե Բրոզլիի գործի հանգամանքները երեկ երեկոյան պարոն Միշել Պոնյատովսկիի տված մամուլի ասուլիսում:

Պարոն Պոնյատովսկի. ... Պարոն Ղե Վարգա-Հիրչի ձերբակալումից հետո սպանության հետ առնչվող բոլոր անձինք ձերբակալված են: Սա շատ պարզ

պատմություն է: Պարոն դե Բրոզլիի կողմից երաշխավորված բանկային ավանդը պետք է մարվեր պարոններ Վարգա-Հիրչի և դե Ռիբեմոնի կողմից:

Լրագրող. Պարոն սուպերինտենդանտ, ո՞վ է այս գործով գլխավոր անձը, դե Վա՞րգան:

Պարոն Օտտավիոլի. Ես կարծում եմ, որ դա պետք է պարոն դե Վարգան լինի:

Պարոն Դյուկրե. ...Պարոն դե Վարգան և նրա հանցակից պարոն դե Ռիբեմոնը սպանության դրդիչներն էին: Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը՝ պարոն Ֆրեչեն:

Պարոն Ժիգուել. Ինչպես տեսնում եք այդ արտահայտությունները մի շարք հրապարակումներ են պարունակում: Այդ պատճառով է, որ ոստիկանությունն այժմ քննադատվում է Արդարադատության նախարարության ծառայողների կողմից: Չնայած որ սուպերինտենդանտ Օտտավիոլին և պարոն Դյուկրեն զգույշ էին (ձայնագրության ավարտ):

ԱՆՏԵՆՆԵ- 2 ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաղորդավար պարոն Դանիել Բիլալիան. ..., Հետևաբար, այս երեկո գործն արդեն բացահայտվել է: Սպանության դրդապատճառներն ու կատարողները հայտնի են:

Պարոն Դյուկրե. Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը՝ պարոն Ֆրեչեն:

Պարոն Օտտավիոլի. Դա ճիշտ է.....:

Պարոն Պոնյատովսկի. Սա շատ պարզ պատմություն է. պարոն դե Բրոզլիի կողմից երաշխավորված բանկային վարկը պետք է մարվեր պարոններ Վարգա Հիրչի և Դե Ռիբեմոնի կողմից:

Լրագրող պարոն սուպերինտենդանտ, ո՞վ է այս գործով գլխավոր անձը, դե Վա՞րգան:

Պարոն Օտտավիոլի. Ես կարծում եմ դա պետք է, որ պարոն դե Վարգան լինի:

Լրագրող պարոն Ժան-Ֆրանսիս Լուչիանի. Վարկը երաշխավորված էր չորս հարյուր միլիոն հին ֆրանկ կազմող Ժան դե Բրոզլիի կյանքի ապահովագրական պոլիսով: Նրա մահվան դեպքում ապահովագրական վճարը պետք է տրվեր Պիեռ դե Վարգային և Ալլենե դե Ռիբեմոնին: Հանգուցալուծումը տեղի ունեցավ անցած գիշեր, երբ ոստիկանության ծառայող Գայ Սիմոնեն առաջինը խոստովանեց: Նա ընդունեց, որ կազմակերպել է սպանությունը և ատրճանակ է տվել պառլամենտի անդամին սպանելու համար: Նա նաև վարձել էր մարդասպանին՝ Ժերար Ֆրեչեին, որին խոստացել էր երեք միլիոն հին ֆրանսիական ֆրանկ, և որն էլ հետագայում երկու համագործակիցներ էր գտել: Նրանց ձախողման առաջին պատճառն այն էր, որ Սիմոնեի անունը նշված էր Ժան դե Բրոզլիի օրագրում, իսկ երկրորդը՝ որ նրանք սպանությունը կատարեցին Դարդանելի փողոց 2-ի (no. 2 rue des Dardanelles) դիմաց...»:

1977 թվականի հունվարի 14-ին պարոն Ալլենե դե Ռիբեմոնին դիտավորյալ սպանության դրդման ու օժանդակության մեղադրանք առաջադրվեց և նա կալանավորվեց: Նա ազատ արձակվեց 1977 թվականի մարտի 1-ին իսկ գործը կարճելու մասին որոշումը կայացվեց 1980 թվականի մարտի 21-ին:

C. Հատուցման վերաբերյալ պահանջները

1977 թվականի մարտի 23-ին պարոն Ալլենն դե Ռիբեմոնը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների հիման վրա բողոք ներկայացրեց Վարչապետին: Նա պահանջում էր տասը միլիոն ֆրանսիական ֆրանկի (ՖՖ) չափով հատուցում բարոյական և նյութական վնասի համար, որն ինքը կրել էր Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների վերը հիշատակված արտահայտությունների արդյունքում:

Վարույթը վարչական դատարաններում

(a) Վարույթը Փարիզի վարչական դատարանում

1977 թվականի սեպտեմբերի 20-ին դիմումատուն Վարչապետի կողմից իր բողոքի անհիմն մերժումը վերանայելու հայցով դիմեց Փարիզի վարչական դատարան՝ կրկին ներկայացնելով նաև հատուցման իր պահանջը: Նա իր փաստարկները ներկայացրեց 1977 թվականի հոկտեմբերի 12-ին:

Նույն կերպ վարվեց նաև Արդարադատության նախարարը՝ 1978 թվականի փետրվարի 21-ին: Վարչական դատարանի կողմից 1978 թվականի մարտի 14-ին ծանուցում ստանալուց հետո Ներքին գործերի նախարարն ու Վարչապետը համապատասխանաբար 1978 թվականի ապրիլի 21-ին և 27-ին ներկայացրեցին իրենց գրավոր փաստարկները: Պարոն Ալլենն դե Ռիբեմոնը լրացուցիչ փաստարկներ ներկայացրեց 1978 թվականի մարտի 29-ին և մայիսի 24-ին:

Հետագայում, 1979 թվականի մարտի 29-ին, կրկին փաստարկներ ներկայացվեցին՝ Մշակույթի նախարարի, ում գործի նյութերն ուղարկվել էին 1979 թվականի հունվարի 23-ին, 1979 թվականի հունիսի 6-ին և 1980 թվականի օգոստոսի 12-ին՝ Ներքին գործերի նախարարի և 1980 թվականի մայիսի 14-ին՝ դիմումատուի կողմից:

1980 թվականի սեպտեմբերի 29-ի լուսններից հետո 1980 թվականի հոկտեմբերի 13-ին Փարիզի վարչական դատարանը վճիռ կայացրեց, որում բերվում էին հետևյալ հիմնավորումները.

«Պարոն Ալլենն, ինքը՝ Ալլենն դե Ռիբեմոնը, հայց էր ներկայացրել առ այն, որ Պետությունը պետք է հատուցի 1976 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած պարոն ժան դե Բրոգլիի սպանությանը կապակցությամբ կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի հայտարարություններում իր անունը հիշատակվելու հետևանքով իր կրած ենթադրյալ վնասները:

Չնայած, որ Պետությունը կարող է պատասխանատվություն կրել Կառավարության անդամի վարչական գործողությունների համար, այնուամենայնիվ արտահայտությունները, որոնք նա անում է իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված, չեն կարող վարչական դատարանների քննության առարկա դառնալ: Դրանից հետևում է, որ հայցն անընդունելի է...»:

(b) Վարույթը Պետական խորհրդում

1980 թվականի դեկտեմբերի 15-ին Պետական խորհուրդը գրանցեց պարոն Ալլենե դե Ռիբենոնի բողոքի համառոտ շարադրանքը: 1981 թվականի մայիսի 19-ին ծանուցում ստանալուց հետո, նա ամբողջությամբ ներկայացրեց իր փաստարկները 1981 թվականի հունիսի 1-ին: Հուլիսի 7-ին այդ փաստարկներն ուղարկվեցին Ներքին գործերի նախարարին, որն իր առարկությունները ներկայացրեց 1982 թվականի ապրիլի 13-ին: Դիմումատուն պատասխանեց 1982 թվականի հուլիսի 7-ին:

1983 թվականի մայիսի 11-ին կայացած լսումներից հետո 1983 թվականի մայիսի 27-ին Պետական խորհուրդը մերժեց բողոքը հետևյալ հիմնավորումներով.

«... Ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքում Ներքին գործերի նախարարի արած հայտարարությունները չեն կարող առանձնացվել այդ միջոցառումներից: Հետևաբար վարչական դատարանները չեն, որ պետք է որոշում կայացնեն նման հայտարարությունների մինչդատական ազդեցության վերաբերյալ:

Վերոգրյալից բխում է, որ չնայած Փարիզի Վարչական դատարանը սխալ էր գործել, երբ վիճարկվող վճռում սահմանել էր, որ դիմումատուի պահանջը վերաբերում է «ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված» գործողությանը և հետևաբար չի կարող քննության առարկան դառնալ վարչական դատարաններում, պարոն Ալլենեի բողոքը, կապված այդ վճռում իր պահանջը մերժելու հետ, անհիմն է»:

Վարույթն ընդհանուր իրավասության դատարաններում

(a) Վարույթը Փարիզի բարձր ատյանի դատարանում (Paris tribunal de grande instance)

Պարոն Ալլենե Ղե Ռիբենոնը 1984 թվականի փետրվարի 29-ին և մարտի 5-ին Փարիզի բարձր ատյանի դատարան հայց ներկայացրեց համապատասխանաբար ընդդեմ Վարչապետի և Կառավարության Իրավաբանի:

1984 թվականի սեպտեմբերի 25-ին Վարչապետը հայտնեց, որ Բարձր ատյանի դատարանը իրավագործություն չունի, և նրա կարծիքով, նման գործողությունը կարող էր վիճարկվել միայն վարչական դատարաններում:

Վարչապետին վերագրվող հայտարարությունների ամբողջական տեքստը ներկայացնելու վերաբերյալ դիմումատուին խնդրանք ներկայացնելուց և զրպարտության հետ կապված գործողությունների ժամկետի սահմանափակումների մասին անհանգստություն արտահայտելուց հետո, Կառավարության Իրավաբանը պատասխանեց 1984 թվականի սեպտեմբերի 21-ին և 1985 թվականի մայիսի 28-ին:

Դիմումատուն իր պնդումները ներկայացրեց 1984 թվականի նոյեմբերի 14-ին և 1985 թվականի ապրիլի 5-ին: Նա խնդրեց դատարանին պահանջել երկու ֆրանսիական հեռուստաընկերություններից տրամադրել 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսի տեսաձայնագրությունները և ներկայացնել դրա վերաբերյալ հրապարակված թերթից քաղվածքները:

Դատարանը 1986 թվականի հունվարի 8-ին կայացրեց հետևյալ բովանդակությամբ վճիռ.

«Վարչապետի դեմ բերված հայցի ընդունելիությունը .

... 1995 թվականի ապրիլի 3-ի Ակտի 38-րդ բաժնի համաձայն, պարոն Պատրիկ Ալլենե դե Ռիբենոնի՝ Ներքին գործերի նախարարի հայտարարությունների արդյունքում իրեն պատճառված վնասի համար պետությունից հատուցում պահանջելու մասին հայցը պետք է հարուցվեր միայն Կառավարության իրավաբանի դեմ, ով դատարանում Պետության միակ ներկայացուցիչն է, այլ ոչ թե Վարչապետի դեմ, ով, հետևաբար այլևս գործով որպես կողմ հադես գալ չէր կարող:

Ընդդատությունը

Փարիզի բարձր ատյանի դատարանը պետք է իրավագորություն ունենա այնքանով, որքանով որ Ներքին գործերի նախարարին վերագրվող հայտարարությունները կապվում են ոստիկանության գործողությունների հետ և չեն առանձնացվում դրանցից:

1976 թվականի դեկտեմբերի 29-ին Ներքին գործերի նախարարի, Քրեական հետաքննության վարչության տնօրենի և Քրեական վարչության ղեկավարի կողմից ժամ Դե Բրոգլիի սպանությանը հաջորդած ոստիկանության գործողությունների արդյունքների մասին մամուլին տեղեկացնելու նպատակով տված մամուլի ասուլիսը կարող է դիտարկվել որպես ընթացքի մեջ գտնվող ոստիկանության գործունեությունների անբաժանելի մաս... :

Վիճարկվող հայտարարությունները

...Յուրաքանչյուր ոք, ով վիճարկում է, որ ինչ-որ արտահայտություն Քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածի իմաստով վիրավորական կամ ուղղակի անզգույշ է, պետք է ապացուցի, որ վիճարկվող արտահայտություններն իրականում տեղ են գտել: Դատարանը չէ, որ պետք է ուղղի կողմերի թերությունները, կամ լրացնի նրանց կողմից ներկայացված ապացույցները, քանի դեռ նրանք ունեն իրենց բոլոր փաստաթղթերը և փաստարկները ազատորեն և մրցակցության սկզբունքի հիման վրա ներկայացնելու հնարավորություն:

Այսպիսով, քանի որ հայցվորը հնարավորություն չունեւր ստանալու վիճարկվող մամուլի ասուլիսի տեսաձայնագրությունը, իսկ Կառավարության իրավաբանի տեսանկյունից, ինքը պարտավոր չէր գործը դատական քննությանը նախապատրաստող դատավորից կամ դատարանից խնդրել այդ ապացույցների հարկադիր ներկայացում, վճիռը պետք է կայացվեր գործում առկա փաստերի հիման վրա:

Պատրիկ Ալլենե Դե Ռիբենոնը ներկայացրել էր քաղվածքներ 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսը լուսաբանող զանգվածային լրատվության միջոցներից, որոնցից մի քանիսը ասուլիսի հաջորդ օրվա կամ ավելի ուշ ամսաթվի հրապարակումներ էին:

... Սակայն թերթերը չէին նշել Ներքին գործերի նախարարի կողմից ենթադրաբար արված արտահայտությունները, ինչպես նշված էր հայցադիմում:

Այնուամենայնիվ, դեպքը տեղի ունենալուց մի քանի տարի անց լրագրողներն իրենց հրապարակումներում անդրադարձան Պատրիկ Ալլենե դե Ռիբեմոնի ենթադրյալ դերի վերաբերյալ Ներքին գործերի նախարարի հայտարարություններին, և օրինակ «Լը Փուանում» (Le Point) 1979 թվականի օգոստոսի 6-ին կարելի էր կարդալ Միշել Պոնյատովսկու արտահայտությունները, հետևյալ խմբագրությամբ.

«Պարոն Դե Վարգան և պարոն Դե Ռիբեմոնը սպանության դրդիչներն էին: Կազմակերպիչը Հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը՝ պարոն Ֆրեչեն»:

....Բացի դրանից, որպես լրացուցիչ փաստարկ հարկ է նշել, որ մամուլի ասուլիսի ժամանակ արված վիճարկվող հրապարակումները ներկայացնում էին զուտ արտահայտություններ, ժան Դե Բրոգլիի սպանությանը Պատրիկ Ալլենե Դե Ռիբեմոնի ներգրավվածության մասին, որոնք ենթադրաբար արվել էին Սուպերինտենդանտ Օտավիոլիի կողմից՝ Ներքին գործերի նախարարի խոսելուց հետո:

Հետևաբար, քանի որ հայցվորը պետության դեմ հայց էր հարուցել բացառապես Ներքին գործերի նախարարի կողմից արված արտահայտությունների առիթով, ապա հայցը պետք է մերժել, առանց զրպարտության և Քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածով սահմանված դատական քննության գաղտնիության խախտման ժամկետային սահմանափակման հարցերի քննարկման, չնայած նրան, որ հայցվորը պնդում էր, թե այս հայցը զրպարտության վերաբերյալ էր հարուցվել...»:

(b) Վարույթը Փարիզի վերաքննիչ դատարանում

Պարոն Ալլենե դե Ռիբեմոնը 1986 թվականի փետրվարի 19-ին բողոքարկեց Փարիզի վերաքննիչ դատարան, իսկ նույն թվականի մարտի 19-ին Կառավարության իրավաբանը հակընդդեմ բողոք ներկայացրեց:

Դիմումատուն կրկին պահանջեց, որ տեսաձայնագրությունները տրամադրվեն ցուցադրման համար:

1986 թվականի մայիսի 7-ին դատական քննության համար գործը նախապատրաստող դատավորն իր պնդումները ներկայացնելու մասին ծանուցում ուղարկեց պարոն Ալլենե դե Ռիբեմոնին, բայց առանց արդյունքի: 1986 թվականի հոկտեմբերի 14-ին դատավորը խնդրեց նրան ներկայացնել իր փաստաթղթերը մինչև հոկտեմբերի 30-ը իսկ պնդումները՝ մինչև նոյեմբերի 14-ը: Նոյեմբերի 19-ին նա վերջին ծանուցումն ուղարկեց՝ նախքան գործը դատական քննությանը նախապատրաստելն ավարտելը: Կառավարության իրավաբանն իր պնդումները ներկայացրեց նոյեմբերի 28-ին, իսկ դիմումատուն՝ դեկտեմբերի 9-ին: Դեկտեմբերի 21-ին կողմերը տեղեկացվեցին, որ գործը դատական քննության համար պատրաստ լինելու մասին որոշումը կկայացվի 1987 թվականի ապրիլի 28-ին:

1987 թվականի հունիսի 17-ի դատական նիստի ժամանակ պարոն Ալլենե դե Ռիբեմոնը խնդրեց հետաձգել նիստը և, դատարանի կողմից սահմանված կարգով

համաձայնություն ստանալուց հետո, իր հետագա փաստարկները ներկայացրեց հուլիսի 8-ին:

Վերաքննիչ դատարանը մեկ այլ նիստ գումարեց 1987 թվականի սեպտեմբերի 16-ին իսկ վճիռը կայացրեց 1987 թվականի հոկտեմբերի 21-ին: Այն չէր բավարարում դիմումատուի վերաքննիչ բողոքը հետևյալ պատճառաբանությամբ.

«Անընդունելիության վերաբերյալ նախնական առարկությունները

... Վնասի գնահատմանը վերաբերող ներքո շարադրյալ փաստարկներից պարզ է դառնում, որ սա հայց է՝ դատական համակարգի սխալ գործելու հիմքով պետության մեղավորության ճանաչման վերաբերյալ, այլ ոչ թե զրպարտության կամ դատական քննությունների գաղտնիության պահպանման խախտման վերաբերյալ քաղաքացիական հայց:

Բողոքի էությունը

Ըստ դիմումատուի, պարոն Պոնյատովսկին արել էր հետևյալ հայտարարությունը. «Պարոն դե Վարզան և պարոն Ալլենե դե Ռիբենոնը սպանության դրդիչներն էին: Կազմակերպիչը հետաքննիչ սերժանտ Սիմոնեն էր, իսկ մարդասպանը պարոն Ֆրեչեն»։ Պարոն Պոնյատովսկու կամ պարոն Դյուկրեի և պարոն Օտտավիոլի կողմից արված մի շարք արտահայտություններից կարելի է պարզորոշ ենթադրել, որ բոլոր մեղավորները ձերբակալվել են, քաշքշուկն ավարտված է իսկ գործը բացահայտված է: Ենթադրվում է, որ այդ երեք անձիք էլ նշել էին, որ հանցագործության պատճառը պարոն դե Բրոզլիի ստացած բանկային վարկն էր, որը հնարավորություն էր տվել պարոն դե Ռիբենոնին ձեռք բերել «Սազաթաթիկների թագուհու ճաշարան» (Rôtisserie de la Reine Pédauque) ընկերության բաժնետոմսերի 50 տոկոսից ավելին:

Ինչևէ, ինչպես դատարանը ստորև իրավացիորեն վճռել է, պարոն Ալլենե դե Ռիբենոնի կողմից ներկայացված մամուլից քաղվածքները բավարար չեն նրա պնդումներն ապացուցելու համար:

Նույնիսկ եթե ենթադրենք, որ դրանք ապացուցված են, անհրաժեշտ է պարզել, արդյոք հայցվորի կողմից նշված ենթադրյալ վնասը կարո՞ղ է կապվել վիճարկվող արտահայտությունների հետ:

...Չի ապացուցվել, որ դատական քննության ընթացքում կատարված վիճարկվող արտահայտություններն, ինքնին, պատճառել են ենթադրյալ վնասը: Այն, որ այս վնասը ենթադրաբար կապված է քրեական վարույթի իրականացման հետ, դեռևս չի նշանակում, որ վիճարկվող արտահայտությունները ազդել են գործի ընթացքի վրա:

Վիճելի արտահայտությունների և վիճարկվող վնասի միջև որևէ պատճառահետևանքային կապի բացակայության պայամներում, անհրաժեշտություն չկա քննության առնել ձայնագրությունները պահանջելու վերաբերյալ արված լրացուցիչ դիմումը:...»

(c) Վարույթը վճռաբեկ դատարանում

Պարոն Ալլենն դե Ռիբենոնը վճռաբեկ բողոք բերեց, որը Վճռաբեկ դատարանը (Երկրորդ քաղաքացիական բաժանմունք) քննեց 1988 թվականի նոյեմբերի 4-ին և 1988 թվականի նոյեմբերի 30-ին առանց բավարարման թողեց հետևյալ հիմքերով.

«... Առաջին հերթին վիճարկվում է, որ Վերաքննիչ դատարանն աղավաղել է մամուլից քաղվածքների իմաստը, որոնք ուղղակիորեն ապացուցում էին, որ արտահայտություններն արել է Ներքին գործերի նախարարը և նշում էին դրանում օգտագործված կոնկրետ բառերը: Երկրորդ, որ դա խախտել է Քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածը, առ այն, որ մերժել է պարոն Պատրիկ Տանկրեդե Ալլենն դե Ռիբենոնի կրած բարոյական վնասի հարցի քննությունը, և վերջապես խախտվել է Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը առ այն, որ մերժել է արդարացի փոխհատուցում տրամադրել մի մարդու, ում հեղինակությունը վնասվել էր միլիոնավոր հեռուստադիտողների կողմից լսված արտահայտություններում:

Ինչևէ, Վերաքննիչ դատարանն իր վճռում սահմանեց,... որ մամուլից քաղվածքները չէին լուսաբանում Ներքին գործերի նախարարի կողմից ենթադրաբար արված արտահայտությունները, ինչպես որ նշված էր բողոքում, այլ ուղղակի անդրադառնում էին այն նշումներին, որոնք արվել էին ոստիկանության սուպերինտենդանտի կողմից՝ Նախարարի խոսելուց հետո, և որ պարոն Պատրիկ Տանկրեդե Ալլենն դե Ռիբենոնի, որպես դրդիչի դերին վերաբերող նշումները, որոնք վերագրվում են պարոն Պոնյատովսկուն, մամուլում հրապարակվել էին միայն դեպքից մի քանի տարի անց:

Նախքան վերաքննիչ դատարանի վճիռ կայացնելը փաստերի ձեռք բերումն իր անսահմանափակ հայեցողության ներքո էր

Դիտարկելով այս պատճառն առանձին, մի կողմ թողնելով բողոքի իրավական հիմնավորումները, որոնք երկրորդական նշանակություն ունեն, Վերաքննիչ դատարանը իր վճիռը հիմնավորեց օրենքով:...»

ՎԱՐՈՒՅԹԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՄ

27. Պարոն Ալլենն դե Ռիբենոնն իր գանգատը Հանձնաժողովին ներկայացրեց 1989 թվականի մայիսի 24-ին: Նա վիճարկում էր, որ 1976 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի կողմից արված հայտարարությունները առաջացրել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետով պաշտպանվող անմեղության կանխավարկածից օգտվելու իրավունքի խախտում: Նա նաև բողոքում էր, որ 13-րդ հոդվածի իմաստով, չի ունեցել այդ հայտարարությունների արդյունքում իր կրած ենթադրյալ վնասների հատուցում ստանալու արդյունավետ միջոցներ, իսկ 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ որ ներպետական դատարաններն անկախ չէին և վարույթն այդ դատարաններում չափից ավելի երկար է տևել:

28. 1993 թվականի փետրվարի 8-ին Հանձնաժողովը գանգատը (թիվ 15175/89) անմեղության կանխավարկածի անտեսման վերաբերյալ բողոքի և վարույթի

երկարատևության մասով հայտարարեց ընդունելի, իսկ մնացած մասով՝ անընդունելի: 1993 թվականի հոկտեմբերի 12-ի իր զեկույցում (31-րդ հոդված) Հանձնաժողովը միաձայն որոշեց, որ առկա է 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում:

ԴԱՏԱՐԱՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

29. Իր հուշագրում Կառավարությունը Դատարանից խնդրում էր «վճռել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում տեղի չի ունեցել»:

30. Դիմումատուն հայցում էր Դատարանից «հաստատել 1993 թվականի հոկտեմբերի 12-ի Հանձնաժողովի որոշումը» և «վճռել, որ առկա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի խախտում»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ և 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

31. Պարոն Ալլենե Դե Ռիբենոնը բողոքում էր 1976 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում Ներքին գործերի նախարարի և ոստիկանության բարձրաստիճան ծառայողների կատարած արտահայտությունների դեմ: Նա հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի վրա, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան»;

A. 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությունը

32. Կառավարությունը, հիմնվելով 1983 թվականի մարտի 25-ին Մինելլին ընդդեմ Շվեյցարիայի գործով Դատարանի վճռի վրա (շարք A թիվ 62), ըստ էության վիճարկում էր 6-րդ հոդվածի 2-րդ կետի կիրառելիությունը: Կառավարությունը պնդում էր, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել միայն դատական իշխանության կողմից և դա կարող է արտահայտվել միայն այն դեպքում, երբ վարույթի արդյունքում մեղադրական դատավճիռ է կայացվում, սակայն դատարանի հիմնավորումներից բխում է, որ մեղադրյալն ի սկզբանե դիտվել էր մեղավոր:

33. Հանձնաժողովն ընդունեց, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը վեր է կանգնած քրեական վարույթում առկա բոլոր դատավարական երաշխիքներից, բայց գտավ, որ դրա շրջանակները շատ լայն են ու պարտավորություններ են առաջացնում ոչ միայն քրեական գործեր քննող դատարանների այլ նաև այլ իշխանություններ համար:

34. Դատարանի խնդիրն է որոշել, արդյոք տվյալ գործում առկա իրավիճակը ազդեցություն ունեցե՞լ է 6-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դիմումատուի իրավունքի իրականացման վրա (տես, *mutatis mutandis*, Սեկանինան ընդդեմ

Ավստրիայի (*Sekanina v. Austria*) գործով 1993 թվականի օգոստոսի 25-ի վճիռը, Շարք Ա, թիվ 266-Ա, էջ 13, կետ 22):

35. 6-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված անմեղության կանխավարկածը նույն հոդվածի 1-ին կետով պահանջվող արդար դատաքննության բաղկացուցիչ տարրերից է (այլ աղբյուրների շարքում, տես *Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweere v. Belgium)* գործով 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռը Շարք A, թիվ 35, էջ 30, կետ 56 և վերը նշված Մինելլի գործով (*Minelli judgment*) վճիռը էջ 15, կետ 27): Դա կխախտվի, եթե անձի նկատմամբ հանցավոր արարք կատարելու համար կայացված մեղադրական դատավճիռը տպավորություն ստեղծի, թե նա մեղավոր էր նախքան նրա մեղքն օրենքով սահմանված կարգով հաստատվելը: Նույնիսկ, եթե բացակայում են ֆորմալ ձևակերպումներ, բավարար է որոշ հիմնավորումների առկայություն, որոնցից ենթադրվում է, որ դատարանը մեղադրյալին մեղավոր է համարել (տես վերը նշված Մինելլի գործով (*Minelli judgment*) վճիռը, էջ 18, կետ 37):

Սակայն 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակները չեն սահմանափակվում Կառավարության կողմից նշված հնարավոր դեպքերով: Դատարանը Մինելլի և Սեկանինայի վերը նշված գործերով վճռեց, որ առկա է եղել այս դրույթների պահանջների խախտում, չնայած որ ներպետական դատարաններն առաջին գործի դեպքում կարճել էին քրեական վարույթները՝ ժամկետները լրանալու, իսկ երկրորդ գործի դեպքում դիմումատուի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացնելու պատճառով: Դատարանը վճռեց նաև, որ դա կիրառելի է բոլոր այն դեպքերի նկատմամբ, որտեղ ներպետական դատարանները չպետք է որոշեն մեղավորության հարցը (տես Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի (*Adolf v. Austria*) գործով 1982 թվականի մարտի 26-ի վճիռը Շարք A, թիվ 49, և *Լութցը, Էնգլերտը և Նեյքենբոկհոֆն ընդդեմ Գերմանիայի* գործով (*Lutz, Englert and Nölkenbockhoff v. Germany*) 1987 թվականի օգոստոսի 25-ի վճիռը, Շարք A, թիվ 123-A, 123-B և 123-C):

Ավելին, Դատարանը կրկին նշում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի այնպես, որ երաշխավորվեն ոչ թե տեսական ու վերացական այլ գործող ու արդյունավետ իրավունքներ (այլ գործերի շարքում տես, *Արտիկոն ընդդեմ Իտալիայի (Artico v. Italy)* գործով 1980թ. մայիսի 13-ի վճիռը, Շարք A, թիվ 37, էջ 16, կետ 33, *Սոերինգն ընդդեմ Միացյալ Թագավորության (Soering v. the United Kingdom)* գործով 1989թ. հուլիսի 7-ի վճիռը, Շարք A, թիվ 161, էջ 34, կետ 87 և *Կրուզ Վարասն ու այլոք ընդդեմ Շվեդիայի (Cruz Varas and Others v. Sweden)* գործով 1991թ. մարտի 20-ի վճիռը, Շարք A, թիվ 201, էջ 36, կետ 99). սա կիրառելի է նաև 6-րդ հոդվածի 2-րդ կետով երաշխավորված իրավունքի նկատմամբ:

36. Դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի այլ նաև այլ հանրային իշխանությունների կողմից:

37. 1976 թվականի դեկտեմբերի 29-ի մամուլի ասուլիսի ժամանակ պարոն Ալլենե Դե Ռիբեմոնը նոր էր ձերբակալվել ոստիկանության կողմից (տես՝ վերը՝ կետ 9): Չնայած այն, որ այդ ժամանակ պարոն Ալլենե Դե Ռիբեմոնին դիտավորյալ սպանությանը դրդելու և օժանդակելու համար մեղադրանք չէր առաջադրվել (տես՝ կետ 12), նրա ձերբակալումը ու ոստիկանության կալանավայրում կալանքի տակ պահելը Փարիզի գործը քննող դատավորի կողմից մի քանի օր առաջ սկսված դատական քննության մասն էր կազմում և 6-րդ հոդվածի իմաստով նա դիտվում է

որպես այնպիսի անձ, ով »մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ«: Մամուլի ասուլիսին մասնակցած երկու բարձրաստիճան ոստիկանության ծառայողներն էլ վարում էին գործի հետաքննությունը: Դատական քննությանը զուգահեռ կատարված և Ներքին գործերի նախարարի կողմից հավանության արժանացած նրանց հայտարարությունները բացատրվում էին հիշյալ հետաքննության ընթացքի մեջ գտնվելու փաստով և ուղղակիորեն կապված էին դրա հետ: Ուստի 6-րդ հոդվածի 2-րդ կետն այս դեպքում կիրառելի է:

B. 6-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանումը

1. Գործին անդրադարձը մամուլի ասուլիսում

38. Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատությունը ներառում է տեղեկություն ստանալու և տարածելու ազատությունը: Ուստի 6-րդ հոդվածի 2-րդ կետը չի կարող խոչընդոտել իշխանություններին հասարակությանը տեղեկացնելու ընթացող քրեական գործի վարույթի վերաբերյալ, բայց պահանջում է դա անել բավարար զուսպ և շրջահայացորեն, հարգելով անմեղության կանխավարկածի սկզբունքը:

2. Վիճարկվող արտահայտությունների բովանդակությունը

39. Հանձնաժողովը, ինչպես և դիմումատուն, գտնում է, որ Ներքին գործերի նախարարի արտահայտությունները և նրա ենթակայության տակ գտնվող ու գործը քննող ոստիկանության ծառայողի և Քրեական հետաքննության վարչության պետի՝ Ներքին գործերի նախարարի ներկայությամբ արված հայտարարությունները անհամատեղելի էին անմեղության կանխավարկածի հետ: Հանձնաժողովը նշում է, որ այդ արտահայտություններում ու հայտարարություններում պարունակվեցին դե Ռիբենոնը ներկայացված էր որպես պարոն դե Բրոզիի սպանության դրդիչներից մեկը:

40. Կառավարությունը պնդում էր, որ այդպիսի հայտարարությունները ներառվում են ընթացող քրեական վարույթի վերաբերյալ տեղեկատվության շրջանակներում և, որպես այդպիսին, անմեղության կանխավարկածը չեն խախտում, քանի որ չեն պարտավորեցնում դատարաններին և կարող են հերքվել հետագա քննության ընթացքում: Դա են վկայում նաև գործի փաստերը, քանի որ դիմումատուին պաշտոնապես մեղադրանք ներկայացվեց միայն մամուլի ասուլիսից երկու շաբաթ անց և գործը վարող դատավորը վերջիվերջո որոշեց գործը կարճել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

41. Դատարանը նշում է, որ տվյալ դեպքում ֆրանսիական ոստիկանության որոշ բարձրաստիճան ծառայողներ պարոն Ալլենե դե Ռիբենոնին, առանց որևէ նախապայմանի կամ վերապահման, ներկայացնում էին որպես սպանության դրդիչներից մեկին՝ մեղսակից դարձնելով նրան այդ սպանությանը (տես կետ11): Սա որոշակիորեն դիմումատուի մեղավորության հռչակում էր, որը առաջին՝ դրդում է հանրությանը հավատալ նրա մեղավորությանը և երկրորդ՝ կանխորոշում էր

իրավասու դատական իշխանության կողմից փաստերի գնահատումը: Հետևաբար առկա է 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆՏՈՒՄԸ

42. Պարոն Ալլենե դե Ռիբենոնը բողոքում էր նաև վարչական իսկ հետո նաև ընդհանուր իրավասության դատարաններում իր կողմից վնասի հատուցման վերաբերյալ հարուցված գործերի քննության երկար տևողությունից: Նա հիմնվում էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի վրա, որը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ..., ունի ... դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք»:

43. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը չվիճարկվեց: Ինչպես և Հանձնաժողովը, Ղատարանը նշեց, որ վիճարկվող վարույթները վերաբերում էին հայտարարությունների արդյունքում դիմումատուի կողմից իր բարի համբավին պատճառված վնասի հատուցման պահանջներին: Հետևաբար, դրանց նպատակը քաղաքացիական իրավունքները որոշելն էր՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

A. Քննարկման ենթակա ժամանակահատվածը

44. Քննարկման ենթակա ժամանակահատվածի ավարտը չի վիճարկվել. վարույթը ավարտվեց 1988 թվականի նոյեմբերի 30-ին, երբ Վճռաբեկ դատարանը առանց բավարարման թողեց Փարիզի վերաքննիչ դատարանի 1987 թվականի հոկտեմբերի 21-ի վճռի դեմ դիմումատուի բերած բողոքը (տես կետ 26):

45. Նույնը չի կարելի ասել ժամանակահատվածի սկզբի վերաբերյալ.

Կառավարության ներկայացմամբ վարչական դատարաններում վարույթը չպետք է հաշվի առնվեն: Այդ դատարանները ըստ էության որոշում չեն կայացրել և հրաժարվել են ընդդատությունից՝ վարչական և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքին համապատասխան, ինչը վարչական դատարաններին պարտավորեցնում էր մերժել այն փաստարկները, որոնց քննությունը նրանք չեն կարող իրականացնել առանց ընդհանուր իրավասության դատարանների գործունեության միջամտության: Պարոն Ալլենե դե Ռիբենոնի փաստաբանները չէին կարող անտեղյակ լինել այս սկզբունքին:

Մյուս կողմից դիմումատուն պնդում էր, որ վարույթները սկսվել են Փարիզի վարչական դատարան բերված հայցադիմումով, և որ ընդդատությունների վերաբերյալ տարածայնությունների պատճառով ընդհանուր իրավասության դատարաններում իրականացված վարույթը վարչական դատարաններում սկսված գործընթացի անհրաժեշտ շարունակությունն էր: Բացի դրանից, գործով վարչական դատարանների ընդդատությունն այնքան բնական էր թվում, որ փոխնախարարը Փարիզի բարձր ատյանի դատարան վիճարկեց գործի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանների ընդդատության հարցը:

46. Ինչպես և Հանձնաժողովը, Ղատարանը ևս ընդունեց դիմումատուի փաստարկը: Ղատարանը նշեց, որ վարչական ու ընդհանուր իրավասության դատարանների՝

փոխհատուցման վարույթների հետ կապված ընդդատության սահմանազատման հարցը բավականին բազմակողմանի ու բարդ խնդիր է, հատկապես, որ այդ վարույթները սկսվել են Կառավարության անդամի կողմից արված արտահայտությունների հիման վրա: Այսպիսով, պարոն Ալլենե դե Ռիբենոնի փաստաբանները չեն կարող քննադատվել առաջին հերթին վարչական դատարաններին դիմելու համար:

Հետևաբար, վարույթի տևողության ողջամտության հարցը որոշելու կապակցությամբ դիտարկվող ժամկետի հաշվարկն սկսվում է 1977 թվականի մարտի 23-ից, երբ փոխնախարարին բողոք ներկայացվեց, ու շարունակվում մոտավորապես 11 տարի և 8 ամիս (կետ 13: Ի թիվս այլ աղբյուրների տե՛ս Կարակայան ընդդեմ Ֆրանսիայի (Karakaya v. France) գործով 1994 թ. օգոստոսի 26 վճիռը Շարք A, թիվ 289-B, էջ 42, կետ 29):

B. Վարույթների տևողության ողջամտությունը

47. Վարույթների տևողության ողջամտությունը պետք է դիտարկվի գործի հանգամանքների, ինչպես նաև Դատարանի վճիռներում արտահայտված չափանիշների, մասնավորապես, գործի բարդության, իրավասու մարմինների ու դիմումատուի վարքագծի լույսի ներքո (Ի թիվս այլ աղբյուրների տե՛ս Կատտե Կլիշե դե լա Գրանժոն ընդդեմ Իտալիայի (Katte Klitsche de la Grange v. Italy) գործով 1994 թվականի հոկտեմբերի 27-ի վճիռը, Շարք A, թիվ 293-B, էջ 37-38, կետ 51): Վերջում, պետք է հաշվի առնվի այն հարցը, թե ի՞նչ ռիսկեր ունի դիմումատուն տվյալ վարույթում: (Ի թիվս այլ աղբյուրների տե՛ս, Հոկկանեն ընդդեմ Ֆինլանդիայի (Hokkanen v. Finland) գործով 1994 թվականի սեպտեմբերի 23-ի վճիռը, Շարք A, թիվ 299-A, էջ 25, կետ 69):

1. Գործի բարդությունը

48. Հանձնաժողովը, որի կարծիքին հղում է կատարում պարոն Ալլենե դե Ռիբենոնը, ընդունում է, որ նրա հարուցած վարույթը որոշակի բարդություն ուներ, քանի որ կապված էր պետության պատասխանատվության հետ:

49. Կառավարության կարծիքով գործի հետ կապված ծագում է նաև արտահայտությունների անփութությունը և դրանց արդյունքում ենթադրյալ վնասներ պատճառելն ապացուցելու բարդ խնդիր: Բացի դրանից կային դատավարական բարդություններ, որոնց առաջացմանը նպաստել էր դիմումատուն:

50. Դատարանը գտնում է, որ նույնիսկ եթե վերը նշված պատճառների ուժով գործը բարդ էր, դա չէր արդարացնում վիճարկվող դատական վարույթների տևողությունը:

2. Դիմումատուի վարքագիծը

51. Պարոն Ալլենե դե Ռիբենոնը պնդում էր, որ ինքը պատասխանատու չէր վարույթների դանդաղ ընթացքի համար:

52. Ի հակադրություն, Կառավարությունը պնդում էր, որ նա մոտավորապես վեց տարի ձգձգել էր վարույթի ընթացքը: Նա Վարչական դատարանի կողմից

իրականացվող վարույթի ընթացքում սպասել էր 11 ամիս մինչև Մշակույթի ու Ներքին գործերի նախարարների առարկություններին պատասխանելը, յոթ ամիս՝ Պետական խորհրդում իր բողոքը հաշվառելուց հետո նախքան իր փաստարկներն ամբողջությամբ ներկայացնելը, ինը ամիս՝ Պետական խորհրդի կողմից իր բողոքը մերժելու վերաբերյալ կայացված որոշումից հետո, նախքան ընդհանուր իրավասության դատարան հայց ներկայացնելը և տաս ամիս՝ գործը քննությանը նախապատրաստող դատավորի կողմից բազմաթիվ միջամտությունների արդյունքում ընդհատվելուց հետո, նախքան Վերաքննիչ դատարան իր փաստարկները ներկայացնելը: Նրա կողմից Վերաքննիչ դատարանից գործի քննությունը հետաձգելու մասին խնդրանքը ևս երեք ամսով երկարաձգեց վարույթը:

Ավելին, Փարիզի վարչական դատարանի կողմից գործն իրեն ընդդատյա չլինելու մասին որոշման ընդունումից հետո անմիջապես քաղաքացիական դատարան հայց չհարուցելով, ինչի իրավունքով դիմումատուն օժտված էր Ֆրանսիայի օրենքներով, նա երկարաձգեց վարույթը մոտավորապես երկու տարի յոթ ամսով, որն այդ որոշման և Պետական խորհրդի որոշման կայացման միջև ընկած ժամանակահատվածն էր:

53. Դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ պարոն Ալլենե դե Ռիբենոնի վարքագիծը որոշակի առումով երկարաձգել է վարույթը:

Դատարանն արդեն նշել է, որ նկատի ունենալով գործը քննելու իրավասություն ունեցող կոնկրետ դատարանը որոշելու հետ կապված բարդությունը, դիմումատուն չի կարող քննադատվել առաջին հերթին վարչական դատարաններին հայց ներկայացնելու համար (տե՛ս կետ 46): Դա վերաբերում է ոչ միայն առաջին ատյանի, այլ նաև վերաքննիչ դատարաններ դիմելուն, հետևաբար Փարիզի վարչական դատարանի 1980 թվականի հոկտեմբերի 13-ի և Պետական խորհրդի 1983 թվականի մայիսի 27-ի որոշումների միջև ընկած երկու տարի յոթ ամիս ընդմիջման պատասխանատվությունը չի կարող վերագրվել միայն պարոն Ալլենե դե Ռիբենոնին:

Հետևաբար, եթե նույնիսկ ենթադրենք, որ դիմումատուն կարող է պատասխանատու լինել մոտավորապես երեք տարի և չորս ամիս ձգձգման համար, ապա դեռ կմնա մոտավորապես ութ տարի:

3. Ազգային իշխանությունների վարքագիծը

54. Պարոն Ալլենե դե Ռիբենոնը ազգային իշխանությունների վարքագծի առնչությամբ հղում էր կատարում Հանձնաժողովի կարծիքի վրա: Բայց նա միաժամանակ նաև պնդում էր, որ տեսաձայնագրությունները տրամադրելու վերաբերյալ իր միջնորդությունը ազգային իշխանությունների կողմից մերժելը, որը հնարավորություն կտար իրեն հաստատել իր փաստարկները, իր ազդեցությունն է ունեցել վարույթի ձգձգման հարցում:

55. Կառավարությունը պնդում էր, որ ազգային իշխանություններն ամեն բան արել են վարույթի ընթացքն արագացնելու համար: Մասնավորապես, Փարիզի վերաքննիչ դատարանում գործը քննության համար նախապատրաստող դատավորը բազմաթիվ անգամ հիշեցումներ է ուղարկել դիմումատուին իր փաստարկները ներկայացնելու համար, որոնք նա չէր շտապում անել: Բացի դրանից, անգործության

միակ ժամանակաշրջանը, որի համար Հանձնաժողովը մեղադրում էր ազգային իշխանություններին, հանդիսանում է վարչական դատարաններում գործի քննությունը, որը ինչպես նշվել էր, չպետք է հաշվի առնել սույն գործով:

56. Ինչպես և Հանձնաժողովը, Ղատարանը նշեց, որ առկա էին անգործության որոշ ժամանակահատվածներ, որոնց համար ազգային իշխանությունները պատասխանատու էին: Դրանցից առաջինը, Փարիզի վարչական դատարանում գործի քննության ընթացքում, պարոն Ալլենե դե Ռիբենոնի կողմից 1978 թվականի մայիսի 24-ին փաստարկները ներկայացնելու և գործի նյութերը Մշակույթի նախարարին 1979 թվականի հունվարի 23-ին ուղարկելու միջև ընկած ութ ամիսն էր: Երկրորդ հատվածը տևել է ինը ամիս և երկու շաբաթ՝ Պետական խորհրդում գործի քննության ընթացքում 1981 թվականի հուլիսի 1-ին դիմումատուի փաստարկներն ամբողջությամբ ներկայացնելու օրվանից մինչև 1982 թվականի ապրիլի 13-ին Ներքին գործերի նախարարի պատասխան տալու օրը (տե՛ս կետ 16-ը): Բացի դրանից Բարձր ատյանի դատարանում գործի քննության ընթացքում փոխնախարարը և Կառավարության իրավաբանն իրենց առաջարկություններն ու պնդումները ներկայացրել էին միայն իրենց դեմ վարույթը հարուցվելուց համապատասխանաբար յոթ և վեց ամիս անց (տե՛ս կետ 18-ը):

Ավելին, վարչական և դատական իշխանությունները անընդհատ խոչընդոտում էին տեսաձայնագրությունների տրամադրմանը, որոնք հնարավորություն կտային պարոն Ալլենե դե Ռիբենոնին ապացուցել, թե ինչ է ասվել մամուլի ասուլիսի ժամանակ. վարչական իշխանությունները վարույթը ձգձգելու այնպիսի քայլեր էին ձեռնարկել ինչպես օրինակ գործի նյութերը Մշակույթի նախարարին ուղարկելը և տեսաձայնագրությունները չտրամադրելը, նույնիսկ երբ դրանք իր տնօրինության տակ էին գտնվում, մինչ դատական իշխանությունները մերժում էին տեսաձայնագրությունները տրամադրելու մասին որոշում կայացնելը, չնայած որ դիմումատուն իր ուժերով դա ապահովել չէր կարող: Ղատարանը չի կասկածում, որ սա վարույթի ընթացքի ձգձգման հիմնական պատճառն էր:

Ինչ վերաբերում է գործի նկատմամբ դատարանների ունեցած վերաբերմունքին, ապա Ղատարանը նշում է, որ վարչական դատարաններից ոչ պակաս քան հինգ տարի և ութ ամիս պահանջվեց որոշելու համար, որ գործն իրենց ընդդատյա չէ, և չնայած Վերաքննիչ դատարանում գործը քննությանը նախապատրաստող դատավորի կողմից վարույթի ընթացքն արագացնելուն ուղղված ջանքերին, գործի նյութերից չի երևում, որ որևէ այլ դատավոր նույն կերպ է վարվել ընդհանուր իրավասության դատարաններում:

C. Եզրահանգում

57. Գործի բարդությունը և դիմումատուի վարքագիծն, ինքնին, բավարար չեն հիմնավորելու համար վարույթի տևողությունը: Ձգձգումները հիմնականում արդյունք էին այն մոտեցման, որը ազգային իշխանությունները ցուցաբերում էին գործի քննության ընթացքում, մասնավորապես, մերժելով կարևոր փաստացի ապացույցները տրամադրելու վերաբերյալ պարոն Ալլենե դե Ռիբենոնի միջնորդությունը: Հաշվի առնելով դիմումատուի համար գործի կարևորությունը, և նույնիսկ այն, որ վարույթները Վերաքննիչ ու Վճռաբեկ դատարաններում առանձին

վերցրած չափազանց երկարատև չեն եղել, վարույթի ընդհանուր տևողությունը, այն է՝ մոտավորապես տասնմեկ տարի և ութ ամիս, չի կարող ողջամիտ համարվել: Հետևաբար առկա է 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 50-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

58. 50-րդ հոդվածի համաձայն.

«Եթե Ղատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Ղատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

A. Վնասը

59. Պարոն Ալլենե դե Ռիբեմոնը նախ և առաջ պահանջում էր նյութական վնասի հատուցում: Նա պնդում էր, որ վիճարկվող արտահայտությունները հանգեցրել են իր անվճարունակությանը և վնասներ կրելուն, և անհնարին են դարձրել նորից աշխատանք գտնելը: Իր բանկը հրաժարվել է շարունակել իրեն արտոնյալ պայմաններով վարկ տրամադրելը և մերժել է վճարել իր ստորագրած չեկերը: 1979 թվականի մարտի 14-ին լուծելով դիմումատուի և պարոն դե Բրոգլիի միջև կնքված պայմանագիրը՝ Փարիզի բարձր ատյանի դատարանը որոշեց պարտավորեցնել դիմումատուին անհապաղ մարել պարտքի իր մասը, և օրենքով սահմանված տոկոսները հաշվարկել պարոն դե Բրոգլիի մահվան օրվանից սկսած, այնպես որ գումարի հիմնական մասը մնաց նրա ժառանգներին: Վերջապես, երբ 1977թ. փետրվարի 7-ին դատարանի կողմից Սագաթաթիկների թագուհու ճաշարանի ("Rôtisserie de la Reine Pédauque") հարկադիր լուծարման մասին որոշում կայացվեց, դիմումատուն բանտում էր գտնվում սպանությանը դրդելու և օժանդակելու մեղադրանքով:

Դիմումատուն նաև բողոքում էր իր և իր ընտանիքի հեղինակությանը պատճառված վնասի համար, որը նրան բարոյական վնաս էր հասցրել և չնայած 1980 թվականի մարտի 21-ին գործը կարճելու մասին որոշում էր կայացվել, այնուամենայնիվ վարույթը երկար էր տևել և զգալի վնաս էր հասցրել, ինչը պայմանավորված էր այն հանգամանքներով որոնց առկայության պայմաններում արվել էին այդ արտահայտությունները, մասնավորապես արտահայտությունները կատարած անձանց կարգավիճակով և այն փաստով որ, պարոն դե Բրոգլիի միջազգային մակարդակով հայտնի անձ էր:

Պարոն Ալլենե դե Ռիբեմոնն իր կրած վնասները գնահատեց ընդհանրապես 10,000,000 ֆրանսիական ֆրանկ:

60. Կառավարության պնդմամբ, դիմումատուն չի ներկայացրել 6-րդ հոդվածի 2-րդ կետի ենթադրյալ խախտման ու իր ֆինանսական վիճակի վատթարացման միջև որևէ ուղղակի պատճառահետևանքային կապ: Ինչ վերաբերում է բարոյական

վնասին, ապա Կոնվենցիայի խախտման փաստի ընդունումն ինքնին հանդիսանում է արդարացի փոխհատուցում:

61. Հանձնաժողովի ներկայացուցիչը նշեց, որ դիմումատուի կողմից ներկայացված նյութական վնասի հատուցման պահանջը բավարար հիմնավորում չունի, ինչը պայմանավորված է դրա՝ Ներքին գործերի նախարարի ու բարձրաստիճան ոստիկանության ծառայողների արտահայտությունների հետ որևէ կապի բացակայությամբ: Մյուս կողմից նա այն կարծիքին էր, որ մեղադրանքի ծանրությունը և մամուլի ասուլիսի տեսաձայնագրությունները տրամադրելու ազգային իշխանությունների շարունակական մերժումները պատճառել են բարոյական վնաս, որն ավելի մեծ հատուցում է պահանջում քան խորհրդանշական փոխհատուցումն է: Վարույթների չափազանց երկարատևության արդյունքում կրած վնասների գնահատման խնդիրը Հանձնաժողովի ներկայացուցիչը թողեց Դատարանի հայեցողությանը:

62. Դատարանը չի ընդունում նյութական վնասի վերաբերյալ պարոն Ալլենե դե Ռիբեմոնի փաստարկները: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ 1979 թվականի դեկտեմբերի 29-ին կայացած մամուլի ասուլիսի ընթացքում նրան առաջադրված մեղադրանքի ծանրությունը նշանակալիորեն նվազեցրել է իր հետ աշխատող անձանց վստահությունն իր նկատմամբ և դրանով իսկ բարդեցրել է իր մասնագիտական գործունեությունը շարունակելը: Դատարանն այդպիսով նյութական վնասի հատուցման պահանջը մասնակի հիմնավորված է համարում:

Ավելի, Դատարանը համաձայնվեց Հանձնաժողովի ներկայացուցչի հետ առ այն, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի և հատկապես 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտման արդյունքում դիմումատուն, անկասկած, բարոյական վնաս է կրել: Չնայած պարոն Բրոզլիի հանրաճանաչ լինելու փաստը, մրա մահվան հանգամանքներն ու դրա առաջացրած արձագանքները իշխանություններին բավարար հիմք էին տալիս հասարակությանն այդ մասին արագորեն տեղեկացնելու համար: Դրանք նաև կանխատեսելի էին դարձնում այն, որ զանգվածային լրատվության միջոցներում ինչպիսի լայն արձագանք կստանան ընթացիկ հետաքննության վերաբերյալ արտահայտությունները: Հետևաբար, դիմումատուի նկատմամբ ոչ բավարար զսպվածության ու նրբանկատության դրսևորումը առավել անթույլատրելի էր: Ավելին, վիճարկող արտահայտությունները լայնորեն լուսաբանվել են ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ այլ պետություններում:

Ելնելով գործին առնչվող մի շարք հանգամանքներից և գնահատելով դրանք 50-րդ հոդվածով նախատեսված արդարացիության սկզբունքի հիման վրա, Դատարանը պարոն Ալլենե դե Ռիբեմոնին շնորհում է 2,000,000 ֆրանսիական ֆրանկի չափով փոխհատուցում:

B. Երաշխիքը

63. Դիմումատուն նաև խնդրեց Դատարանից վճռել, որ Պետությունը պետք է երաշխիք տա իրեն ընդդեմ Փարիզի բարձր ատյանի դատարանի 1979 թվականի մարտի 14-ի վճռի կատարման ցանկացած պահանջի, հակառակ դեպքում տալով հետագայում արդարացի փոխհատուցման չափը ավելացնելու հայց ներկայացնելու իրավունք:

64. Հանձնաժողովի ներկայացուցիչն այս հարցի կապակցությամբ կարծիք չի հայտնել:

65. Ինչպես և կառավարությունը, Ղատարանը նշում է, որ 50-րդ հոդվածի համաձայն Անդամ-պետության վրա նման պարտավորություն դնելու իրավասություն դատարանը չունի (տես, mutatis mutandis, «Ինդրոկալչե» ՍՊԸ-ն ընդդեմ Իտալիայի (Idrocalce S.r.l. v. Italy) գործով 1992թ. փետրվարի 27-ի վճիռը, Շարք A, թիվ 229-F, էջ 65, կետ 26, և Պեադոլան ընդդեմ Նիդեռլանդների (Pelladoah v. the Netherlands) գործով 1994թ. սեպտեմբերի 22-ի վճիռը, Շարք A թիվ 297-B, էջ 35-36, կետ 44): Ղատարանը նաև նշեց, որ արդարացի փոխհատուցման խնդիրը լիովին լուծված է:

C. Ծախսերը և ծախքերը

66. Վերջապես պարոն Ալլենն դե Ռիբենոնը պահանջում էր 270,384.28 ֆրանսիական ֆրանկ Կոնվենցիայի մարմիններում իր կատարած ծախսերի դիմաց, որից 211,500 ֆրանկը վճարների համար, 16,480 ֆրանկը դատական ծախսերի իսկ 42,404.28 ֆրանկը ավելացված արժեքի հարկի համար:

67. Կառավարությունը և Հանձնաժողովի ներկայացուցիչը այս հարցը թողեցին Ղատարանի հայեցողությանը:

68. Գնահատումն իրականացնելով արդարացիության հիմունքներով՝ Ղատարանը դիմումատուին շնորհում է 100,000 ֆրանսիական ֆրանկ փոխհատուցում, գումարած ավելացված արժեքի հարկը:

ՎԵՐԸ ԹՎԱՐԿՎԱԾ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Ութը մեկի դեմ ձայների հարաբերակցությամբ վճռում է, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

2. Միաձայն վճռում է, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

3. Ութը մեկի դեմ ձայների հարաբերակցությամբ վճռում է, որ Պատասխանող մասնակից պետությունը երեք ամսվա ընթացքում, որպես վնասի հատուցում, պետք է դիմումատուին վճարի 2,000,000 (երկու միլիոն) ֆրանսիական ֆրանկ:

4. Միաձայն վճռում է, որ պատասխանող մասնակից պետությունը երեք ամսվա ընթացքում դիմումատուի կատարած դատական ծախսերի դիմաց նրան պետք է վճարի 100,000 (հարյուր հազար) ֆրանսիական ֆրանկ, գումարած ավելացված արժեքի հարկը:

5. Միաձայն մերժում է արդարացի փոխհատուցման վերաբերյալ մնացած պահանջները:

Կազմված է անգլերեն և ֆրանսերեն և հրապարակվել է 1995 թվականի փետրվարի 10-ին Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում հրապարակային դատալսման ժամանակ:

Ստորագրեց՝ Նախագահ Ռոլֆ Ռիսսդալ

Ստորագրեց՝ քարտուղար Հերբերթ Պետզոլդ

Կոնվենցիայի 51-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի A կանոնակարգի 53-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն, սույն վճռին կցվում է պարոն Սիֆսուդ Բոննիչիի մասնակի տարբերվող կարծիքը:

ՂԱՏԱՎՈՐ ՄԻՖՏՈՒԴ ԲՈՆՆԻՉԻ ՄԱՍՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՎՈՂ ԿԱՐԾԻՔԸ

1. Ես համաձայն եմ մեծամասնության հետ, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, և որ դիմումատուին ծախսերի և ծախքերի դիմաց պետք է վճարվի 100,000 ֆրանսիական ֆրանկ, գումարած ավելացված արժեքի հարկը:

2. Այնուամենայնիվ, ես համաձայն չեմ այն կարծիքի հետ, որ առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի խախտում:

Այս վճիռն առաջին անգամ հաստատեց, որ մարդու այն հիմնական իրավունքը, որի համաձայն «քրեական հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղք ապացուցվել չէ օրենքով սահմանված կարգով», «կարող է խախտվել ոչ միայն դատավորի կամ դատարանի այլ նաև հանրային այլ իշխանությունների կողմից» (կետ 36):

Սա սույն վճիռով հաստատված ամենակարևոր սկզբունքն է:

3. 35-րդ կետում նշված է. «Ղատարանը կրկին հիշեցնում է, որ Կոնվենցիան պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի երաշխավորի իրավունքներ, որոնք իրական և գործող են, ի տարբերություն տեսական և վերացական իրավունքների»:

4. Իմ անհամաձայնությունը ծագում է այն նկատառումից, որ նման տարածական մեկնաբանություն ստացած անմեղության կանխավարկածը չի կարող երաշխավորվել գործնականում և լինել արդյունավետ: Այն դեպքում, երբ պետական մարմինների կողմից խախտումը տեղի է ունենում մինչև հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի նկատմամբ դատավարություն իրականացնելը, հնարավոր չէ ապահովել գործնական և իրական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե այդ միջոցը պետք է ապահովվի խախտումը կատարվելուց անմիջապես հետո: Տվյալ դեպքում դատարանը փաստում է խախտում, որը տեղի է ունեցել 1976 թվականին, և հետևաբար դա կարող է նյութական փոխհատուցում ենթադրել: Սակայն, սա որոշակիորեն գործնական ու իրական իրավական արդյունավետ պաշտպանության միջոց չէ, որը կարող է բավարար համարվել, եթե խախտումը տեղ է գտել մինչև դատավարությունը սկսելը:

5. Խնդրի բարդությունը ցույց տալու համար ես ցանկանում եմ հղում կատարել Մալթայի գործին:

1972 թվականի ապրիլի 13-ին մի տան տանիքին ռումբ էր պայթել և տանտիրուհին՝ Ջուզեպպինա Ֆարմոզան մահացել էր:

1972 թվականի ապրիլի 28-ին Ոստիկանության պետը իր չորս ոստիկանության ծառայողների հետ միասին մամուլի ասուլիս տվեցին: Մամուլի ասուլիսի ընթացքում խոսվեց հանցավորության խնդրի ընդհանրապես, ոստիկանության ուժերի կարգավիճակի և նման այլ հարցերի մասին, և հետո Ոստիկանության պետն ավելացրեց, որ Ֆարմոզայի ռումբի հետ կապված անցկացվող հետաքննությունն արդյունավետ է, քանի որ էնմանուել Ֆարմոզան՝ զոհի ամուսինը, խոստովանել է կատարած հանցանքը, որ վաղը նրա նկատմամբ մեղադրանք կհարուցվի և որ ամուսինը ոստիկանության պաշտպանությունն է խնդրել, քանի որ վախենում է իր կնոջ եղբայրների վրեժից:

6. Ֆարմոզան հայց ներկայացրեց քաղաքացիական դատարան և ի թիվս այլ պահանջների, ներկայացրեց բողոք առ այն որ խախտվել է Մալթայի Սահմանադրության 39-րդ հոդվածի 5-րդ կետով երաշխավորված իր իրավունքը:

«Յուրաքանչյուր անձ, ով մեղադրվում է հանցագործության կատարման մեջ, անմեղ է քանի դեռ նրա մեղքը չի ապացուցվել կամ նա իրեն մեղավոր չի ճանաչել»:

Դատարանը հայցն արագորեն քննեց և 1972 թվականի մայիսի 5-ին որոշում կայացրեց այն մերժելու մասին: Բողոքարկման արդյունքում, 1973 թվականի մայիսի 16-ին Սահմանադրական դատարանն ուժի մեջ թողեց առաջին վճիռը (DEC. KOST. 1964-1978 GH.ST.LIGI. p. 343): Հետագայում, դատական քննության արդյունքում Ֆարմոզան 1973 թվականի հուլիսի 13-ին դատապարտվեց իր կնոջ սպանության համար:

7. Այս փաստերը բավական նման են սույն գործի հանգամանքներին: Տարբերությունը կայանում է նրանում, որ Մալթայի գործով հարցը քննվել և դրա վերաբերյալ որոշում է կայացվել մինչև դատավարության տեղի ունենալը, մինչդեռ սույն գործով Դատարանը հարցը քննում է, երբ ամեն ինչ արդեն ասվել և ավարտվել է:

8. Խախտում չհայտնաբերելու վերաբերյալ Մալթային դատարանների եզրահանգման հիմնավորումները համոզիչ չեն: Որևէ ուսումնասիրություն չի կատարվել այն հարցի կապակցությամբ, արդյոք երաշխիքը տարածվում է միայն դատավորի և դատարանի գործունեության, թե նաև հանրային իշխանության այլ մարմինների վրա: Սակայն դրանցից պարզորոշ երևում է, որ եթե ընդունվում է սկզբունքի տարածական մեկնաբանությունը, ինչը այժմ հաստատվում է սույն վճռով, ապա չկա խախտված իրավունքը վերականգնելու համար գործնական ու իրական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, որը դատարանը կարող է նշանակել մինչև քրեական գործով դատավարությունը սկսելը, նույնիսկ եթե ներպետական օրենսդրությունում առկա սահմանադրական մեխանիզմն այնպիսին է, որ խախտման վերաբերյալ վարույթը կարող է իրականացվել մինչև դատավարությունը, այլ ոչ թե դրանից հետո:

9. Քանի որ Դատարանը նման կարևորագույն սկզբունք է սահմանում, որը կարող է էական ազդեցություն ունենալ Անդամ-պետությունների քրեական դատավարության օրենսդրության վրա, սակայն չի հստակեցնում հաստատված խախտման համար գործնական ու իրական իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի խնդիրը, ես հնարավոր չեմ համարում այս հարցի կապակցությամբ մեծամասնության կարծիքին համաձայնվելը: